

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սույն թվականի սեպտեմբերի 25—30 օրերին Մայր Աթոռում տեղի ունեցան հանդիսություններ՝ նվիրված սրբալույս մեռոնի օրհնությանը և Նորին Սրբություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի ծննդյան 75-ամյակին, քահանայական կոչման 40-ամյակին և գահակալության 28-րդ տարեդարձին:

Այս առթիվ Սուրբ Էջմիածին էին ժամանել Կ. Պոլսի հայոց ամենապատիվ պատրիարք Տ. Շնորհք արքեպիսկոպոսը, Հայ Եկեղեցու թեմական առաջնորդներն ու թեմական պատգամավորները, Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության և Երուսաղեմի հայոց պատրիարքության պատվիրակությունները, Մայր Աթոռի բոլոր բարեբարներ, ինչպես նաև բազում հրավիրյալներ և բազմահազար ուխտավորներ:

Հանդիսություններին մասնակցելու համար Մայր Աթոռ էին ժամանել նաև քույր Եկեղեցիների ներկայացուցիչներ՝

Ռուս պրավոսլավ Եկեղեցու պատվիրակությունը գլխավորում էր Լենինգրադի Տ. Անտոնի միտրոպոլիտը, Ռումեն օրթոդոքս Եկեղեցու պատվիրակությունը՝ Տ. Թեոկթիստ միտրոպոլիտը, Վրացական օրթոդոքս Եկեղեցու պատվիրակությունը՝ Տ. Խրիստաֆոր եպիսկոպոսը, Բուլղարական օրթոդոքս Եկեղեցու պատվիրակությունը՝ Տ. Կիրիլ վարդապետը, Անգլիկան Եկեղեցին ներկայացնում էր Հենրի Հիլ եպիսկոպոսը, իսկ Հռոմեական կաթոլիկ Եկեղեցին՝ պրոֆեսոր հայր Սուտները՝ Վիեննայից:

Սեպտեմբերի 24-ին, շաբաթ օրը, երեկոյան, Մայր տաճարում տեղի ունեցավ կիրակամտի հանդիսավոր ժամերգություն և հսկում, որին ներկա եղան քույր Եկեղեցիների պատվիրակությունները, հայ հոգևորական և աշխարհական պատգամավորներ, ինչպես նաև մեծ թվով ուխտավորներ:

Սեպտեմբերի 25-ին, կիրակի օրը, առավոտյան ժամը 10-ին, Մայր տա-

ճարում հանդիսավոր սուրբ պատարագ մատուցեց ԱՄՆ-ի հայոց արևմտյան թեմի առաջնորդ Տ. Վաչէ արքեպիսկոպոս Հովսեփյանը:

Հավարտ սուրբ պատարագի քույր Եկեղեցիների ներկայացուցիչները և Մայր Աթոռի հարգարժան պատգամավորներն ու հյուրերը առաջնորդվեցին Մայր տաճարի բակի արևմտյան մասում այս առթիվ պատրաստված պատվանդան:

Ժամը 12.30-ին Վեհափառ Հայրապետը, զգեստավորված, ուղեկցությամբ Կ. Պոլսի հայոց պատրիարքի և Հայ Եկեղեցու 12 թեմական արքեպիսկոպոսների ու եպիսկոպոսների, ինչպես նաև քույր Եկեղեցիների բարձրաստիճան ներկայացուցիչների, առաջնորդվեց Մայր տաճարի վանգակատան առջև պատրաստված բեմահարթակը՝ կատարելու սրբալույս մեռոնի օրհնությունը:

Մայրավանքի ամբողջ շրջափակը լցված էր տասնյակ հազարավոր հայրենի և աշխարհի տարբեր երկրներից եկած ուխտավորներով, հավատացյալներով, հյուրերով:

Ժամը 12.30-ին սկսվեց մեռոնօրհնության արարողությունը Հայաստանյայց Եկեղեցու դարավոր կարգ ու կանոնի համաձայն:

Արարողության վերջում Վեհափառ Հայրապետը քարոզեց հայ ժողովրդի համար սրբալույս մեռոնի ունեցած հոգևոր նշանակության մասին:

Մեռոնօրհնության արարողությունից հետո հանդիսավոր մեծ թափորով Ամենայն Հայոց Հայրապետը, քույր Եկեղեցիների ներկայացուցիչները, ողջ հայ հոգևորականությունն ու թեմերի պատգամավորները առաջնորդվեցին Վեհարան:

Ժամը 15.00-ին Վեհարանի սեղանատանը հայ և օտար հոգևորականների պատվին տրվեց պաշտոնական ճաշկերույթ:

Սեպտեմբերի 26-ին, երկուշաբթի օրը, առավոտյան ժամը 10.00-ին, Վեհափառ Հայրապետի գլխավորությամբ, հայ հոգևորականությունը, քույր Եկեղեցիների ներկայացուցիչները, բոլոր պատգամավորներն ու հյուրերը այցելեցին Ծիծեռնակաբերդ և ծաղկեպսակներ վետեղեցին հայ նահատակաց հուշարձանին: Այս առթիվ հուշարձանի հավերժական կրակի շուրջ տեղի ունեցավ հոգեհանգստյան կարգ, և բոլոր ներկաները միաձայնաբար աղոթեցին 1915 թվականի մեծ Եղեռնի զոհերի հոգիների խաղաղության համար:

Ժամը 11.30-ին Կ. Պոլսի հայոց ամենապատիվ սրբազան պատրիարքը, հայ բարձրաստիճան հոգևորականները, ինչպես նաև թեմերի պատգամավորները, Ամենայն Հայոց Հայրապետի գլխավորությամբ, այցելեցին Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհուրդ, որտեղ նրանց ընդունեց խորհրդի նախագահ Տիար Ֆադեյ Սարգսյանը:

Նույն օրը, ժամը 14.00-ին, Երևանի «Հրազդան» հյուրանոցում Հայկ. ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհուրդը տվեց պաշտոնական ճաշկերույթ ի պատիվ Հայոց Հայրապետի և նրա հարգարժան հյուրերի:

Սեպտեմբերի 27-ին, երեքշաբթի օրը, ժամը 18.00-ին, Վեհարանի հանդիսությանց դահլիճում տեղի ունեցավ հոբելյանական հանդիսավոր նիստ՝ նվիրված Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ի ծննդյան 75-ամյակին, քահանայական կոչման 40-ամյակին և գահակալության 28-րդ տարեդարձին:

Հանդիսությանը ներկա էին Կ. Պոլսի հայոց ամենապատիվ պատրիարքը, քույր Եկեղեցիների հոգևոր ներկայացուցիչները, հայ Եկեղեցու թեմական առաջնորդները, թեմերի պատգամավորները, Մայր Աթոռի բարերարները, հայրե-

նի մտավորականության ներկայացուցիչներ և բազմաթիվ այլ հրավիրյալներ՝ շուրջ 500 հոգի:

Հանդիսությանը Սովետական Հայաստանի կառավարությունը ներկայացնում էր Հայկ. ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ռուբեն Պարսամյանը:

Հանդիսությանը ներկա էր նաև ՍՍՀՄ Մինիստրների խորհրդին առընթեր կրոնական գործերի խորհրդի անդամ Վ. Ս. Վոլոդինը:

Հանդիսության բացումը կատարեց Գերագույն Հոգևոր Խորհրդի ատենապետ Տ. Սիոն արք. Մանուկյանը:

Հոբելյար Հայրապետի 28-ամյա գործունեությանը նվիրված վեկացումով հանդես եկավ Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես եպս. Պողարյանը:

Ապա ողջույնի և շնորհավորանքի խոսք ասաց Կ. Պոլսի հայոց Տ. Շնորհք պատրիարքը՝ հանուն Հայ Եկեղեցու հոգևորականության:

Ողջույնի և շնորհավորանքի խոսքերով հանդես եկավ Հայկ. ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ռուբեն Պարսամյանը, Ռուսաց Եկեղեցու ներկայացուցիչ միտրոպոլիտ Անտոնին, ՍՍՀՄ Մինիստրների խորհրդին առընթեր կրոնական գործերի խորհրդի անդամ Վ. Ս. Վոլոդինը, սիրիական հետ մշակութային կապի կոմիտեի անունից՝ Վարդգես Համազասպյանը, Ռուսական օրթոդոքս Եկեղեցու անունից՝ միտրոպոլիտ Թեոկթիստը, ՀՍՍՀ խաղաղության կոմիտեի և խաղաղության ֆոնդի անունից՝ կոմպոզիտոր Էդվարդ Միրզոյանը, Ս. Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի տնօրեն Սեն Արևշատյանը, Վրաց Եկեղեցու անունից՝ Տ. Խրիստաֆոր եպիսկոպոսը, Անգլիկան Եկեղեցու անունից՝ կանոնիկոս Վիկտոր դը Վաալը, Բուլղարական Եկեղեցու անունից՝ Տ. Կիրիլ վարդապետը, և Հռոմեական կաթոլիկ Եկեղեցու անունից՝ պրոֆ՝ Հայր Սուտները:

Հանդիսության ավարտին շնորհակալության և երախտագիտության ջերմ խոսքով հանդես եկավ Ամենայն Հայոց Հայրապետը:

Հանդիսության երկրորդ բաժնում գործադրվեց գեղարվեստական ճոխ ծրագրով հոգևոր համերգ:

Սեպտեմբերի 28-ին, չորեքշաբթի օրը, առավոտյան ժամը 10.00-ին, հանդիսություններին ժամանած Մայր Աթոռի հոգևորական և աշխարհական հյուրերը այցելեցին Ս. Մեսրոպ Մաշտոցի անվան ձեռագրաց Մատենադարան՝ ծանոթանալու հայ մշակույթի գանձերի հնագույն նմուշներին:

Նույն օրը, ավելի ուշ, Մայր Աթոռի հյուրերի մի մասը ուխտագնացություն կատարեց դեպի Ս. Գեղարդի վանք, իսկ մի մասն էլ շրջագայության մեկնեց դեպի Սևանա լիճ:

Սեպտեմբերի 29-ին, հինգշաբթի օրը, առավոտյան ժամը 11.00-ին, հայ բարձրաստիճան հոգևորականները, Վեհափառ հայրապետի գլխավորությամբ, այցելեցին Հայկական ՍՍՀ Գերագույն սովետ, որտեղ նրանց ընդունեց Գերագույն սովետի նախագահության նախագահ Տիար Բաբկեն Սարկիսովը: Այստեղ, հանդիսավոր իրադրության մեջ, Ամենայն Հայոց Հայրապետին հանձնվեց Հայկ. ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության «ՊԱՏՎՈԳԻՐ»-ը, խաղաղության պաշտպանության օգտին Նորին Սրբության հայրենասիրական գործունեության և նրա ծննդյան 75-ամյակի կապակցությամբ:

Հոկտեմբերի 1—2 օրերին, քույր Եկեղեցիների ներկայացուցիչները, Հայ Եկեղեցու ներքին և արտաքինության թեմերի հոգևորական և աշխարհական բոլոր պատգամավորները հրաժեշտ տվեցին Հայոց Հայրապետին, Մայր Աթո-

ռին և մեկնեցին երախտագետ զգացումներով ու լավագույն տպավորություններով:

Սեպտեմբերի 25—30 հոբելյանական հանդիսությանց օրերը, որոնք վերածվեցին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, նրա արժանավոր գահակալի և մայր հայրենիքի նկատմամբ հայ ժողովրդի անխառն սիրո, հավատարմության ու նվիրվածության մի վառ ցույցի, Մայր Աթոռի մեր օրերի պատմության մեջ կմնան որպես անմոռանալի և հավետ հիշատակելի օրեր:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին,
5 հոկտեմբերի 1983 թ.